

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.304>

From Ethnography to Cultural Anthropology: on the Issue of the Boundaries of Social Sciences in Armenia

Gayane Shagoyan

<https://orcid.org/0009-0001-0505-6236>

NAS RA Institute of Archeology and ethnography, leading researcher, YSU, PhD

gayashag@yahoo.com

Keywords - Armenian ethnography, Yervand Lalayan, cultural anthropology, ethnographic questionnaire, Soviet ethnography, culturology, cultural studies

This article explores the ongoing disciplinary transition from ethnography to anthropology in post-Soviet Armenia—a process marked by considerable inconsistency and debate. The challenge of naming the discipline that studies the cultural characteristics of various groups emerged even during its initial development. Armenian intellectuals of the late 19th century participated in these discussions, often aligning with terminology and frameworks adopted in European academic traditions. However, the Soviet era imposed the term “ethnography” on the discipline in Armenia, a designation that has persisted into the post-Soviet period. This continuity has led to significant challenges both domestically and internationally.

In global social sciences, “ethnography” is widely understood as a research method—primarily fieldwork—rather than a standalone discipline. Meanwhile, the discipline with similar content is better known as socio-cultural anthropology. This discrepancy complicates the external representation of Armenian academia and its institutional structure. Domestically, the term adds confusion, as it is often equated with the mission of preserving traditional culture, overshadowing its broader theoretical and methodological scope.

The article aims to stimulate a critical discussion on the urgent need to reform and modernize the Armenian system of social sciences, including updating terminologies to align with international standards and accurately reflect the evolving content of the field.

History and Culture. Journal of Armenian Studies, special issue1, 2025, pp. 304-321 .



Received: 17.11.2024

Revised: 29.01.2025

Accepted: 23.04.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Ազգագրությունից մշակութային մարդաբանություն. Հայաստանում սոցիալական գիտակարգերի սահմանների խնդրի շուրջ

Գայանե Շազոյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, ԵՊՀ, պ.գ.թ.

Հիմնաբառեր - Հայ ազգագրություն, Երվանդ Լալայան, մշակութային մարդաբանություն, ազգագրական հարցարան, խորհրդային ազգագրություն, մշակութային ուսումնասիրություններ, մշակութաբանություն

Սույն հոդվածը ուսումնասիրում է հետխորհրդային Հայաստանում գիտակարգային անցումը ազգագրությունից մարդաբանության, որը մի քառասունյակ գործընթաց է՝ տարբեր բանավեճերի ուղեկցությամբ: Լոկալ խմբերի մշակութային առանձնահատկություններն ուսումնասիրող գիտակարգի համար անվանում գտնելու քննարկումներն առկա էին սկսած դրա ձևավորման սկզբնական փուլից: Այս բանավեճին մասնակցում էին 19-րդ դարավերջի հայ մտավորականները նույնպես՝ նախընտրելով եվրոպական ակադեմիական ավանդույթներում ընդունված տերմինաբանությունն ու բովանդակային շրջանակը: Այնուամենայնիվ, Հայաստանի խորհրդայնացումը այս գիտակարգի համար ամրագրեց «ազգագրություն» եզրը, որը պահպանվեց և հետխորհրդային շրջանում: Գիտակարգային այս ժառանգությունը հանգեցրել է զգալի մարտահրավերների ինչպես ներքին ակադեմիական շուկայում, այնպես էլ միջազգային գիտական հաղորդակցության մեջ:

Հասարակական գիտություններում «ազգագրությունը» լայնորեն ընկալվում է որպես հետազոտական մեթոդ, հիմնականում դաշտային աշխատանք, այլ ոչ թե առանձին գիտակարգ: Մինչդեռ նույնանման բովանդակությամբ գիտությունը ավելի հայտնի որպես սոցիալ-մշակութային մարդաբանություն: Այս անհամապատասխանելիությունը բարդացնում է Հայաստանի ակադեմիայի արտաքին ներկայացվածությունը և դրա ինստիտուցիոնալ կառուցվածքը: Երկրի ներսում այս եզրը ստեղծում է շփոթություն, քանի որ այն հաճախ նույնացվում է ավանդական մշակույթի պահպանման առաքելության հետ՝ ստվերելով դրա ավելի լայն տեսական և մեթոդաբանական շրջանակը:

Հոդվածի նպատակն է խթանել քննադատական քննարկում Հայաստանի հասարակական գիտությունների համակարգի բարեփոխման և արդիականացման անհրաժեշտության վերաբերյալ, ներառյալ անվանումների թարմացումը՝ միջազգային

Հափանիչներին համապատասխանեցնելու և ընդունի զարգացող բովանդակությունը
ճշգրիտ արտացոլելու համար:

От этнографии к культурной антропологии: к вопросу о границах социальных наук в Армении

Гаяне Шагоян

НАН РА институт археологии и этнографии, научный сотрудник, ЕГУ, к.и.н.

Ключевые слова - Армянская этнография, Ерванд Лалаян, культурная антропология, этнографический вопросник, советская этнография, культурные исследования, культурология.

В этой статье рассматривается дисциплинарный переход от этнографии к антропологии в постсоветской Армении — процесс достаточно хаотичный и непоследовательный. Проблема наименования дисциплины, изучающей культурные особенности различных групп, возникла еще во время ее первоначального развития. Армянские интеллектуалы конца 19 века участвовали в этих дискуссиях, часто приспосабливаясь к терминологии и рамкам, принятым в европейских академических традициях. Однако советизация Армении повлекла за собой закрепление за этой дисциплиной термина «этнография», обозначение, которое инерционно сохранилось и в постсоветский период. Эта преемственность привела к значительным проблемам как внутри страны, так и в международных научных коммуникациях.

В глобальных социальных науках «этнография» широко понимается как метод исследования — в первую очередь полевая работа — а не как отдельная дисциплина. Тогда как наука с похожим содержанием более известна как социокультурная антропология. Это несоответствие усложняет внешнее представление армянской академии и ее институциональной структуры. Внутри страны этот термин добавляет путаницы, поскольку его часто приравнивают к миссии сохранения традиционной культуры, затмевая ее более широкую теоретическую и методологическую рамку.

Цель статьи — стимулировать критическую дискуссию о необходимости реформирования и модернизации армянской системы социальных наук, включая обновление терминологии для приведения ее в соответствие с международными стандартами и точного отражения меняющегося содержания этой научной области.

Մուտք: Ազգագրությունը որպես գիտակարգ հայոց մեջ ձևավորվել է XIX դարի վերջին՝ ենթարկվելով այդ շրջանում գիտությունների հիմնադրման նույն գործընթացին, որի արդյունքում այս գիտակարգը տարբեր անվան տակ ձևավորվեց մի շարք եվրոպական երկրներում [Bart, Gingrich, Parkin, Silverman, 2005, 3-253]: Ի տարբերություն պետականություն ունեցող երկրների՝ լինի դա կայսրություն, թե ազգային պետություն, որտեղ ազգագրության ձևավորման հասարակական պահանջը հիմնված էր երկու գործընթացների վրա՝ գաղութատիրության և ազգայնականության [տե՛ս Clay 1995, Bart, Gingrich, Parkin, Silverman, 2005], հայոց ազգագրությունը շրջանցել է գաղութատիրական խոսույթը, եթե իհարկե հայկական գյուղական կյանքի հանդեպ քաղաքաբնակ մտավորականների հետաքրքրությունը չորակենք որպես ինքնակոտորակացում և այն չկապենք օրիենտալիզմի հետ [հմմտ. Said, 1977, Buchowski, 2012, 475-477]: Բոլոր դեպքերում, հայ ազգագրության ձևավորումն ազգային պետության բացակայության պայմաններում արժանի է առանձին ուշադրության: Սա մի գործընթաց է, որը նախաձեռնվում է ոչ թե վերևից՝ իշխանական համակարգերից, այլ ներքևից՝ մտավորականների, ում այսօր կանվանեին՝ «Էթնիկ ակտիվիստներ» [հմմտ. Hagan, 2009, 613-640]:

Հայալեզու ազգագրական պարբերականների [«Ազգագրական հանդես», 1896-1915 թթ., «Էմինեան ազգագրական ժողովածու», 1904-1913 թթ.] թողարկումը, հայ մտավորականների ինքնակազմակերպումն ու տարբեր կայսրություններում նամակագրությամբ հեռավար հետազոտական ցանցի ստեղծումը¹, հարցարանների միջոցով ազգագրական նյութերի գրանցումը խոսում են արդի ազգերի ձևավորման ակտիվ գործընթացի մասին [հմմտ. ըստ Խրոխի՝ ազգաստեղծման առաջին փուլի հետ – Hrokh, 1993, 3-19]: Այսինքն, չնայած նրան, որ հայախոս բնակչությունը բաժանված էր տարբեր պետական սահմաններով, տեղի է ունենում էթնիկ խմբի մոբիլիզացիա, որի գիտակցումը ծավալվում է ազգագրության ձևավորմանը զուգընթաց, նաև դրա միջոցով:

Չնսեմացնելով «Ազգագրական հանդեսի» կարևոր դերն ու նշանակությունը՝ նկատի ունենանք, որ ազգագրության խնդիրներն ու հասարակական պահանջները XIX դարի վերջին և XXI դարի սկզբին շատ տարբեր են՝ հատկապես հաշվի առնելով կատարված սոցիալ-քաղաքական փոփոխությունները (պետականագուրկ էթնիկ համայնքից անցումը ազգային պետության) և սոցիալ-հումանիտար գիտակարգերում հարացուցային տեղաշարժերը [պոզիտիվիզմից դեպի պոստմոդեռնի տարբեր «իզմերի» - տե՛ս Clifford,

¹ Սրա կորիզը 1900 թ. Թիֆլիսում հիմնադրված Ազգագրական հրատարակչական ընկերությունն էր, 1905 թ. ուներ 80 անդամ, 1906 թ. վերածվեց «Հայոց ազգագրական ընկերության» (Մելիք-Փաշայան, Նազինյան 1988, 10):

Marcus, 1985]: Ուստի այս աշխատանքում կփորձեմ խնդրայնացնել «ազգագրության» տեղն ու դերը Հայաստանի արդի սոցիալական գիտություններում, հարցադրելով նման անվանման համապատասխանելիությունը, մի կողմից, սոցիալական գիտության զարգացման միջազգային միտումներին, մյուս կողմից, հայաստանյան հասարակական պահանջներին: Ինչպես մեզանում է, բնավ պարտադիր չէ, որ դրանք համընկնեն: Հետազոտողը հաճախ ստիպված է ընտրություն կատարել՝ «հայրենասեր գիտնականի», ով համապատասխանում է հասարակական սպասումներին, և միջազգային ասպարեզում ընդունելի հետազոտողի համբավ ունենալու միջև, ում տեքստերը համահունչ են նորագույն հոլովույթներին, բայց անհաղորդ՝ սեփական հանրության պահանջներին:

Ազգագրություն vs. Մարդաբանություն: Սոցիալական գիտությունների ձևավորման շրջանում, որը, համեմատ հումանիտար և ճշգրիտ գիտությունների, ավելի ուշ է ձևավորվել (հիմնականում՝ XIX դ. Վերջին), հայ գիտնականներն ուշի ուշով հետևել են «ազգագրություն» vs. «ազգաբանություն» vs. «մարդաբանություն» անուններ կրող գիտակարգերի փոխհարաբերությունների, համընկնումների, սահմանազատումների շուրջ ծավալվող քննարկումներին: Այս քննարկումները նրանց այնքան են հուզել, որ հայ պարբերականների առաջին իսկ համարների էջերին դրանք արտացոլված են: Օրինակ՝ «Էմինեան ազգագրական ժողովածուն», որը հրապարակվում էր Մոսկվայի Լազարյան ճամարանում, ուշադրության կենտրոնում պահում էր ռուսական դպրոցում ընթացող քննարկումները, ուստի այս պարբերականում տեղ են գտնում ռուսական և նրան առավել մոտ՝ գերմանական դպրոցի հոդվածները [տե՛ս օր. Շտեռնբերգ, 1908, 1-36, Լիպպերտ 1908, 1-221]: Ռուսական կայսրության ազգագրական դպրոցը, որին խորհրդային տարիներին հետևում է հայկականը, «ազգագրություն» և «մարդաբանություն» եզրերի միջև ընտրությունն անում է հոգուտ «ազգագրության» համարելով, որ «մարդաբանությունը» բնագիտական գիտակարգ է, որը մարդուն ուսումնասիրում է «բնա-պատմական տեսակետից» [Շտեռնբերգ, 1908, 2]: Մինչդեռ ազգագրությունը Շտեռնբերգը որակում է որպես հումանիտար գիտակարգ, որը «գրադուր է այն ազգերի կոյլտուրի ուսումնասիրութիւնով, որոնք չեն մտել պատմութեան շրջանը և նախապատմական հնախօսութեան մէջ, այսինքն է՝ յատկապէս նախնական ազգերի և կոյլտուրական ազգերի այն խաւերի ուսումնասիրութիւնով, որոնք ամենից շատ են պահպանել նահապետական կացութեան գծեր» [Շտեռնբերգ, 1908, 1]: Եթե Շտեռնբերգը նախնառաջ նկատի ուներ Ռուսական կայսրությունում հայտնված այլ, ոչ ռուսական, մշակույթները, ապա կայսրության կազմում հայտնված այլ էթնիկ խմբերի մտավորականների համար այդ «այլը» դառնում է սեփական գյուղը:

Հակառակ Շտեռնբերգի՝ Էմ. Վալերստայնը մարդաբանությունը, ի թիվս պատմության, արևալագիտության, սոցիոլոգիայի, տնտեսագիտության ու քաղաքագիտության, համարում է ոչ թե բնագիտական կամ հումանիտար, այլ առաջին

սոցիալական գիտակարգերից, որոնց առաջացումը պայմանավորված էր՝ ազգային պետությունների ձևավորմամբ (տնտեսագիտություն, քաղաքագիտություն, սոցիոլոգիա, պատմագիտություն) և գաղութատիրական նվաճումներով (արևելագիտության, մարդաբանության, պատմության) [Валлерстайн, 2006, 233-244]:

Սոցիալական այս վեց գիտակարգերի ուսումնասիրության օբյեկտը «ժողովուրդն» է՝ «սոցիումը»: Սակայն, եթե տնտեսագիտությունը, քաղաքագիտությունն ու սոցիոլոգիան ուսումնասիրում են սեփական ժողովուրդները և հակված են կիրառել ճշգրիտ գիտության մեթոդաբանություն [հիմնականում՝ քանակական], ապա արևելագիտությունը, մարդաբանությունը և պատմագիտությունն ուսումնասիրում էին ժողովուրդներ, որոնք գտնվում էին որոշ հեռավորության վրա՝ տարածական (Եվրոպայից հարավ և արևելք) կամ ժամանակագրական (անցյալում) և կիրառում էին հումանիտար գիտության գործիքակազմ [տե՛ս Валлерстайн, 2006, 233-244, հմմտ. Коллинз, 2009, 38-60]: Փաստորեն, ռուսական և արևմտյան գիտական ավանդույթները տարբեր ոլորտներում են տեսնում մարդաբանությունը: Ռուսականի համար «ազգագրությունը» հումանիտար է, իսկ «մարդաբանությունը» (որի տակ հասկացվում է նախևառաջ ֆիզիկական մարդաբանությունը)՝ ճշգրիտ: Մինչդեռ արևմտյան գիտական ավանդույթում՝ մարդաբանությունը սոցիալական գիտակարգ է, իսկ «ազգագրությունը» դրա մեթոդի անվանումն է: Այն ներառում է սովորաբար երկարաժամկետ դաշտային աշխատանք, որտեղ հետազոտողները հետևում և մասնակցում են ուսումնասիրվող խմբի առօրյա կյանքին՝ հասկանալու սոցիալական կառուցվածքները, գործելակերպը, համոզմունքները, արժեքները են: Այս իմաստով՝ ազգագրությունն իսկապես մարդաբանության հատվածն է, դրա էմպերիկ կամ առաջնային նյութն արձանագրող փուլը:

Նման տեսանկյունից է նայում «ազգագրության» և «մարդաբանության» հարաբերակցությանը հայտնի մարդաբան Կլոդ Լևի-Ստրոսը: Նրա համար ազգագրությունը, ազգաբանությունն ու մարդաբանությունը փոխկապված մեկ գիտակարգի երեք փուլերն են. Ազգագրությունը որպես դաշտային նյութերի նկարագրություն, ազգաբանությունը որպես այդ նյութերի համեմատական վերլուծություն, իսկ մարդաբանությունը, ըստ նրա, կոչված է միավորելու այդ երկու փուլերն ավելի ընդհանրական եզրակացություններ անելու համար [Levi-Strauss, 1975, 4-5]:

Վերոհիշյալ երեք գիտակարգերի կամ Լևի-Ստրոսյան ձևակերպմամբ՝ մեկ գիտակարգի երեք փուլերի ընկալումը գրեթե համընկնում է 1896 թ. «Ազգագրական հանդեսի» առաջին հատորում պրոֆ. Պետրիի հրապարակած դրույթների հետ, որտեղ ներկայացված է մարդաբանության զարգացման անցած ուղին՝ մատենագիտական

աղբյուրներում առկա առաջին ազգագրական նյութերից մինչև համալսարանական ծրագրեր, որոնք ավելի հայտնի են «մարդաբանություն» անվան տակ [Պետրի, 1896, 1-50]:

Եր. Լալայանը նույնպես ընդունում էր «ազգագրությունը» որպես էմպիրիկ նյութն արձանագրելու աշխատանք, ոչ ավելին: «Ազգագրական հանդեսի» առաջին համարում «ազգագրությանը» նվիրված Լալայանի հոդվածի առյուծի բաժինը հատկացված է բանահյուսական նյութերին [Լալայեան, 1896, 7-26]: Այսինքն, իր համար ազգագրության և բանահյուսության սահմանը բավականին լրոգված էր: Այդ սահմանը գրեթե բացակայում է նաև անգլիական «ֆոլկլոր» գիտակարգում, որտեղ բանահյուսական և ազգագրական նյութը միևնույն բանահավաքների աշխատանքն է, ովքեր ուսումնասիրում են ոչ թե գաղութացված ժողովուրդների մշակույթը, այլ սեփականը՝ անգլիականը:

Այսպիսով, Լալայանը, ի տարբերություն իր ժամանակակից Շտեռնբերգի, գտնում է, որ ազգագրությունն ինքնաբավ գիտություն չէ: Հանդեսում հրատարակված նկարագրություններն ընդամենը նյութեր են ապագա ուսումնասիրությունների համար. «Մեր կոչումն այժմ միայն նիւթեր հաւաքելն է, որովհետև դրանց պակասութեան պատճառով՝ գիտական ուսումնասիրութիւններն անհնարին են, մէկ էլ դրանց համար ժամանակ չի պակասիլ: Մենք կը կրենք քարերը և երանի նրան, ով կըզա այդ քարերով ազգային ինքնութայնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոյուսիոնի օրենքները գծելու» [Լալայեան, 1896ա, 6]: Այդ պատճառով է, որ «Ազգագրական հանդեսներում» Եր. Լալայանը ձգտում էր ներառել մարդաբանների տեսական, վերլուծական, փիլիսոփայական աշխատանքները՝ դրանք թարգմանելով հայերեն: Այսինքն, չնայած նրա ռուս-կայսերական հպատակությանը, նա փորձում էր «Հանդեսի» ընթերցողներին փոխանցել մարդաբանական տեսական այնպիսի գիտելիք, որը համահունչ էր եվրոպական գիտական համակարգին: Հաշվի առնենք, որ սոցիալական գիտությունների թեկնածուի կոչումը նա ստացել էր Ժնևի դպրոցում 1894 թ., իսկ 1896 թ. համագործակցում էր Փարիզի Մարդաբանական ընկերության հետ: Իր հիմնադրած «Հայոց ազգագրական ընկերության» կանոնադրությունում ընկերության նպատակը այսպես է սահմանված՝ «...ուսումնասիրել Կովկասը, նրան կից երկրները և հայկական գաղութները, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական գիտությունների տեսակետից: Միննույն ժամանակ տարածել Հայ հասարակութեան մեջ մարդաբանական գիտութիւնները» [Կանոնադրութիւն, 1906]:

Ու քանի որ արդիականության փուլում կտրուկ փոփոխություններ կրող գյուղական ավանդական մշակույթի արձանագրումն իր համար դառնում է թիվ մեկ խնդիր՝ ապագա մարդաբանությունը զարգացնելու նախապայման, Լալայանը նախաձեռնում է ազգագրական հարցարանների միջոցով այդ նյութի արձանագրումը:

Ցավոք, Եր. Լալայանի հարցարանով դաշտային նյութ հավաքելու նախաձեռնությունը ոչ այնքան օգնեց քննական մոտեցում ձևավորելուն և ներկայացված

նյութի մարդաբանական վերլուծությանը, որքան կանոնիկացրեց այդ նյութը որպես «իսկական հայկական մշակույթի» նմուշ: Ու հետագա դաշտային աշխատանքների ընթացքում հետազոտողները ոչ այնքան նկատում էին նորն ու փոփոխությունները, որքան տոգորված էին գտնելու գրանցած «ավանդականի» այս կամ այն հետքն ու մնացորդային («վերապրուկային») դրսևորումները՝ հաճախ առաջնորդվելով գրեթե նույն հարցարաններով, որ կազմել էին Խալաթյանը, Լալայանը, և նրանցից ազդված Լիսիցյանը (այս ավանդույթը հետագայում շարունակեց նաև Դ. Վարդումյանը):

Առաջին ազգագրական հարցարանները կազմվել են դեռ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ի օրոք՝ XVI դ. [Relaciones geográficas, 1577 թ.] իր գաղութների մասին տեղեկություններ հավաքելու համար (կլիմա, կրոն, սովորույթներ, տնտեսություն) [Midena, Yeo, 2022, 503-510]: Հետագայում շատ տարածվեցին Լոնդոնի արքունիքի գիտական հասարակության կազմած ազգագրական հարցարանները՝ միսիոներների և ճանապարհորդողների համար: Առավել հայտնի առաջին ազգագրական հարցարաններից էր բրիտանացի մարդաբանների կազմած՝ «Notes and Queries on Anthropology» [«Մարդաբանության նշումներ և հարցումներ», 1874] [Midena, Yeo, 2022, 511-513]:

Դժվար է ասել, թե որքանով է Լալայանն այն իմացել, քանի որ դրա գերմաներեն (1929) և ֆրանսերեն (1925) թարգմանություններն իր հրատարակած հարցարանից (1896) շատ ավելի ուշ են հայտնվել: Բայց հավանական է, որ Լալայանը Ժնևում եղած ժամանակ (1894 թ.) ծանոթացել է Ժոզեֆ-Մարի դե ժեռանդոյի 1799 թ. կազմած հարցարանին «Considérations sur les diverses méthodes à suivre dans l'observation des peuples sauvages» («Մտորումներ տարբեր մեթոդների մասին, որոնք կիրառելի են վայրի ժողովուրդներ դիտարկելու ժամանակ»), որի կառուցվածքն ու հարցադրումները մոտ էին բրիտանական հարցարանին:

Ինչևէ, հայկական տարբեր բնակավայրեր, մարզեր նկարագրելու Լալայանի մոտեցումը կազմված է նույն տրամաբանությամբ, որ տեսնում ենք թե՛ «Notes and Queries on Anthropology», թե՛ «Considérations sur les diverses méthodes à suivre dans l'observation des peuples sauvages» հարցարաններում: Սակայն հայտնի մարդաբան՝ Բրոնիսլավ Մալինովսկին, խստորեն քննադատում է հարցարաններով դաշտային նյութեր հավաքելը [Midena, Yeo, 2022, 517-519]: Նա պնդում էր, որ նախապես կազմած հարցերը խանգարում են տեսնել տեղային առանձնահատկություններն ու համատեքստը, հարցերը պետք է մշակել տեղում, քանի որ կարևորը ոչ թե հարցարանով կազմած տվյալների հավաքագրումն է, այլ դրանց արդիականությունը որոշելը, ուստի անհրաժեշտ է հարցերը ձևակերպել միայն տվյալ մշակույթը ճանաչելուց հետո [Midena, Yeo, 2022, 519]:

Լալայանի ամսագիրը հետևում էր էվոլյուցիոնիստական հարացույցին, և Մալինովսկու ֆունկցիոնալիստական հայացքը (ձևավորվեց 1920-ականներին) [Kuper,

2015, 1-24], որի համար կարևոր էր ոչ թե անցյալը, այլ ներկան, այդպես էլ չհասավ «Ազգագրական հանդես»: Հարցարաններով աշխատելը, ինչպես և զգուշացնում էր Մալինովսկին, անխուսափելիորեն խզում էր առաջացնում հայ իրականությունը ճանաչող մտավորականների և Լալայանի հանձնարարությամբ հարցարաններով լրացվող բովանդակության միջև: Օրինակ, հարսանեկան հարցարանով [Լալայեան, 1896գ, 127-130] լրացրած Լոռվա հարսանիքի նկարագրությունում չէք գտնի «կոխ» ծեսը, որը Թումանյանի «Անուշ»-ի համար վճռորոշ դրվագ է և Լոռվա շատ համայնքներում ընդհուպ մինչև 1990-ականները կենցաղավարող ծեսերից: Նկարագրություններում քիչ են ներկայացված կանանց ծեսերը, քանի որ և հարցարան կազմողը, և թերևս գրանցողների զգալի մասը տղամարդիկ էին: Բարձր գնահատելով Երվանդ Լալայանի աշխատանքը՝ ընդունենք, որ այն չպետք է դառնար հետագա ազգագրագետների «սուրբ գիրքը», որը գրեթե առանց վերապահության, քննադատական մոտեցման մինչ օրս օգտագործվում է որպես «ավանդական մշակույթի» առավել հավաստի աղբյուր:

Մինչդեռ Լալայանի մյուս, իմ կարծիքով, շատ ավելի կարևոր փափագը՝ նպաստել մարդաբանության կայացմանը հայոց մեջ, մնաց չիրականացված: Ժողովրդական մշակույթի ուսումնասիրությունները խորհրդային շրջանում պարփակվեցին «ազգագրություն» գիտակարգի մեջ, որի խնդիրը ոչ միայն անվանումն էր, որտեղ արտացոլված է ավելի նյութահավաքչությունը, քան դրա քննական վերլուծությունը, այլ մեկուսացումը միջազգային մարդաբանական քննարկումներից, գիտակարգի գաղափարականացումը՝ սկզբից խորհրդային, ապա՝ ազգայնական:

Դուրս գալ գրասենյակից, ընկղմվել հետազոտվող խմբի առօրյա ընթացքի մեջ և տեղում հետևել, թե ինչպես է ծավալվում հետազոտողին հուզող երևույթը, այլ ոչ թե ինչպես են այն ներկայացնում հարցազրույցներում՝ պահանջված մոտեցում է ոչ միայն մարդաբանների միջավայրում, այլև մի շարք այլ սոցիալական գիտություններում: Հաշվի առնելով՝ որ այս մեթոդը ծնունդ է առել մարդաբանությունից, որը չի կարող որևէ հետազոտություն անել առանց ազգագրական (դաշտային⁴¹ նյութերի, մեթոդը ստանում է «ազգագրություն» անվանումը ('ethnography' – բառացի «խմբի նկարագրություն»): Այն կիրառվում է այլ գիտակարգերում նույնպես (քաղաքագիտությունում, սոցիոլոգիայում, պատմագիտությունում, կրթության մեջ, առողջապահական ուսումնասիրություններում և նույնիսկ մարքեթինգում): Այս համատեքստում ազգագրությունը ուսումնասիրում է սոցիալական փոխազդեցություններ և մշակույթների մանրամասներ, կազմում է համատեքստով հարուստ նկարագրություններ և մեկնաբանություններ: Սակայն այն կարող է ներառել այնպիսի տեսական շրջանակ, որը տարբերվում է մարդաբանությունից, դուրս է դրա սահմաններից, և հարում է այլ գիտակարգերի:

Այսպիսով, թեև ազգագրությունը հիմնականում մշակութային մարդաբանության մեթոդաբանական անկյունաքարն է, այն կարող է դիտվել որպես առանձին ոլորտ, մեթոդ

և եզակի դեպքերում որպես գիտակարգ՝ կախված ակադեմիական ավանդույթից և համատեքստից, որտեղ այն կիրառվում է: Հայոց մեջ այն ձևավորվում է որպես դաշտային նյութահավաքչական մեթոդ, հետո հայտնվում է ռուսական, ապա՝ խորհրդային ազգագրական դպրոցների ազդեցության ներքո, և այդ անվան տակ ներառում է ոչ միայն դաշտային աշխատանքը, այլև դրա վերլուծությունները, ողջ գիտական գործիքակազմը:

Խորհրդային ազգագրության ժառանգությունը: Այսօր Հայաստանում «ազգագրությունը» շարունակում է կիրառվել որպես գիտակարգի պաշտոնական անվանում՝ շարունակելով խորհրդային ավանդույթը: Մի անվանում, որն այդ իմաստով այլևս չկա նույնիսկ Ռուսաստանում (այնտեղ զուգահեռաբար օգտագործում են «ազգաբանություն» և «մշակութային մարդաբանություն» տարբերակները), որտեղից ժառանգել ենք ոչ միայն անունը, այլ նաև դրա ինստիտուցիոնալ համակարգը՝ խորհրդային գիտակարգային բաժանումներով:

Խորհրդային ակադեմիական համակարգում «ազգագրությունը» դիտվում էր որպես ազգաբանության (եվրոպական երկրներում՝ «ethnology») հետ սերտորեն կապված անկախ գիտակարգ, որը ներառում էր մշակութային հատկանիշների ցուցակագրումը և, համեմատ արևմտյան մշակութային մարդաբանության, ավելի քիչ էր կենտրոնացած դրանք կրողների վրա: Մշակութային հատկանիշները վերագրելով ուսումնասիրվող խմբերին որպես ներքուստ բնորոշ հատկություններ՝ էթնիկ խմբերն էսենցիալացվում են: Դրանք դիտվում են որպես մնայուն, գրեթե անփոփոխ խմբեր՝ հստակ սահմաններով և նշված հատկանիշների ժառանգորդությամբ: Այս մոտեցումը հիմնավորվում է Յու. Բրոմլեյի «ազգերի» մասին պրիմորդիալ տեսությամբ [Бромлей, 1973, հմմտ. Тишков, 2003], որը հիմնահոսային է դառնում ողջ խորհրդային շրջանում:

1920-30-ականներին ԽՍՀՄ-ում ազգային քաղաքականությունը մշակելիս՝ ազգագրագետներին երբեմն օգտագործում են որպես կենտրոնի և էթնիկ խմբերի միջև միջնորդ: Նրանք, մի կողմից, սպասարկում էին որոշումներ կայացնողներին անհրաժեշտ տեղեկատվությամբ և ազդում ընդհուպ մինչև էթնիկ սահմաններ գծելու ու միջէթնիկ կոնֆլիկտներին լուծումներ գտնելու վրա [Hirsch 2005], մյուս կողմից, Մոսկվայի քաղաքական տեսլականն ու օրակարգը «թարգմանում» էին բազմազգ երկրի լոկալ խմբերին:

Երբ 1932 թվականից հետո ազգային քաղաքականությունը փոխվեց և ռուս մշակույթը հայտարարվեց «հավասարների մեջ առաջինը» [Мартин, 2001, 106-107], սկսվեց ազգային մշակույթների ռուսականացումը՝ անտեսելով պաշտոնապես հայտարարված «ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» դրույթը: Իրականում ավելի հեշտ էր բովանդակության փոխարեն ներկայացնել «սոցիալիստական ձևը», մինչդեռ շատ երևույթների բովանդակություն մնում էր կրոնական կամ ազգային [Шагоян, 2022, 122-

144]: Ազգագրագետների դաշտային աշխատանքներն ակամայից արձանագրում էին ավելի ավանդապաշտ իրականություն՝ շատ երևույթներ որակելով որպես «սոցիալիստական մարդու» կերպարին հակասող անցյալի «վերապրուկ»: Ինչևէ, ազգագրությունը բացում էր այն նեղ պատուհանը, որտեղից հնարավոր էր տեսնել իրական՝ «ոչ խորհրդային մարդուն», որը տարբեր էր նաև «հակախորհրդային» այլախոհից [հմմտ. Юрчак 2014]:

«Զարգացած» սոցիալիզմի տարիներին ազգագրությունն սկսում է վերածվել մասամբ «դիսիդենտական» գիտակարգի, քանի որ ազգային մշակույթի սեղմվող տարածքն առաջացրեց որոշակի դիմադրություն, իսկ 1960-ականների հալոցքը հնարավորություն տվեց բարձրաձայնելու ազգային և քաղաքացիական խնդիրներ: Առանձին հանրապետություններում քաղաքական շարժումները շրջադարձ կատարեցին դեպի ազգային՝ դիմադրելով կենտրոնի պարտադրած «խորհրդա-ռուսական» ազդեցությանը: Ազգագրությունը սկսում է ընկալվել որպես «ազգային» պահապան, այլ ոչ թե ընթացիկ մշակութային երևույթները ուսումնասիրող գիտակարգ: Ժողովրդական երգն ու պարը ստանում են «ազգագրականի» որակում: Դրանք ընկալվում են որպես թույլատրված «ձևով՝ ազգային» մշակույթ, մինչդեռ ժամանակ բացելով ազգային կիսաթաքուն տարածքը, որտեղ կուտակվում են «ազգային-ազատագրական» տրամադրություններ [հմմտ. Арутюнян, 2018, 3-11]: Այսպես, «ազգագրությամբ» քողարկվում էր ինքնաբերական «ժողովրդականը»՝ այն տեղավորելով «վերահսկվող՝ ձևով ազգային»-ի մեջ [Շագոյան, 2024, 70-72]:

Ազգագրության ու ազգագրագետի առաքելությունը մինչ օրս շատերը համարում են ազգային պահպանությունը: Շարունակելով խորհրդային ավանդույթը՝ ուշ- և հետխորհրդային ազգագրական գիտությունը իսկապես հաճախ է դիրքավորվում որպես «փրկարար ազգագրություն» (salvage ethnography), իմա՝ հայ ավանդական մշակույթի պահապան: «Փրկարար» ազգագրությամբ էին առաջնորդվում XIX դարի վերջի – XX դարի սկզբի գրեթե բոլոր ազգագրագետներն ու մարդաբանները, ովքեր համոզված էին, որ ավանդական մշակույթները կարող են անհետանալ գաղութատիրության, արդյունաբերականացման և գլոբալացման ազդեցությամբ: Ուստի նրանք ձգտում էին արձանագրել մշակութային կյանքի հնարավորինս լայն շրջանակ՝ լեզու, առասպելներ, ծեսեր, արվեստ, առօրեականություն՝ մինչև այս ամենը կանհետանա: Խորհրդային շրջանից մինչև 2010 թ.՝ Հայաստանում պաշտպանված 73 ազգագրական ատենախոսություններից 45-ում կա «XIX դարի վերջ – XX դարի սկիզբ» ձևակերպումը [Dabaghyan, 2011, App. 1, հմմտ. Abrahamian 2014]: Ինչը լավագույնս հաստատում է մեր գիտությունը հիմնականում «փրկարար ազգագրության» շրջանակում գործելու փաստը:

«Salvage ethnography»-ն խիստ քննադատեց Ջեյմս Քլիֆորդը, որը համարում էր, որ «փրկարար ազգագրությունը» հաշվի չի առնում մշակույթների փոփոխվելու և

հարմարվելու կարողությունները [Clifford, 1988, 1-26, 52-91]: Այսօր դասագրքային ճշմարտություն է այն, որ մարդաբանությունը ոչ միայն ավանդական, այլև արդի և հետարդի մշակույթներն ուսումնասիրող գիտակարգ է: Ու չնայած հայ ազգագրագետները վաղուց ուսումնասիրում են ժամանակակից խնդիրներ՝ և ոչ միայն հայերի, գիտակարգի անվանումն ու առաքելությունը չի արժանացել պատշաճ մասնագիտական քննարկմանն ու չի բարձրաձայնվել այն փոխելու անհրաժեշտությունը:

Ազգագրության կարգավիճակը գիտակրթական ենթակառուցվածքներում:

Խորհրդային ակադեմիական ժառանգություն է նաև այն, որ հնագիտության հետ մեկտեղ ազգագրությունը հայտնվեց պատմության «ենթագիտություն» կարգավիճակում: Ազգագրագետները ստանում են «պատմական գիտությունների» թեկնածուի կամ դոկտորի աստիճան, հետևաբար պետք է տեղավորեն իրենց աշխատանքները համապատասխան պատմագիտական հարացույցների մեջ: Սպասելի է, որ և՛ հնագիտության, և՛ ազգագրության ատենախոսությունների զգալի մասի նշված հիմնական մեթոդը՝ պատմա-համեմատականն է: Սա էլ այն դեպքում, երբ պատմագիտությունը հարում է հումանիտար գիտություններին, հնագիտությունը և դրա մաս կազմող ֆիզիկական մարդաբանությունը՝ մեթոդով մոտենում են բնագիտականին, իսկ մարդաբանությունը, իր ազգագրական մեթոդով՝ սոցիալական գիտություններին:

Գիտակարգերի միջև բաժանումներն այսօր ավելի պայմանական են: ԱՄՆ-ում մարդաբանությունը հանդես է գալիս որպես մարդու մասին ընդհանուր գիտակարգ, որը բաղկացած է չորս ուղղություններից՝ հնագիտական, ֆիզիկական, մշակութային և սոցիոլեզվաբանական մարդաբանություններից: Այս բաժանումը չի խոչընդոտում նոր, նեղ, փորձարարական ծրագրեր առաջարկելու, քանի որ համալսարաններում ծրագրերը հաստատվում են՝ անկախ ամբիոններից, դրանք արագ ստեղծվում են և իրենց խնդիրը լուծելուց հետո անցավ անհետանում՝ կախված օրվա պահանջից, շուկայից, աշխարհում տեղի ունեցող փոփոխություններից:

Մեզանում գիտակարգերի համապատասխանելությունն ու վարչարարությունը կապված է ամբիոնների հետ, և նոր կրթական ծրագիր առաջարկելը վերածվում է տարիների վարչարարական խաչընդոտներ հաղթահարելու խնդրի և ավելի հաճախ ձախողվում, կամ ոչ էլ նախաձեռնվում նման ծանր մեքենա շարժելու հեռանկարի պատճառով: Իսկ հրնթացս կատարվող փոփոխությունները չունեն որևէ ձևակերպված տեսլական գիտակարգերի, բաժանարար սահմանների կամ դրանց չեղարկման շուրջ: Ազգագրությունն ու հնագիտությունը քննարկվող գիտակրթական բարեփոխումների ծրագրերում հայտնվում են «արվեստի» կլաստերում, իսկ գիտկոմի գիտակարգերի ռեգիստրում՝ հնագիտությունը նշվում է որպես պատմագիտական, իսկ ազգագրությունը որպես ...«այլ», իմա՝ անհայտ, գիտություն:

Իրավիճակը բարդացավ մի նոր գիտակարգի՝ մշակութաբանության, առաջացմամբ: Չնայած բառացի «մշակութաբանություն» (culturology) եզրը Լեսլի Ուայթն առաջարկել էր 1949 թ. [White, 1958], բայց այն չընդունվեց, և արևմտյան ակադեմիական և համալսարանական համակարգերում այդպես էլ չստացավ ճանաչում: Գործնականում դա միայն հետխորհրդային գիտակարգ է, որի հասարակական պահանջարկը կապված է խորհրդային գաղափարախոսությունը սպասարկող՝ մարքսիզմ-լենինիզմի, աթեիզմի, կոմկուսի պատմության և այլ նման գաղափարականացված ոլորտների, գործազուրկ մասնագետներին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխատանքով ապահովելու հետ: Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինի օգնական՝ Գ. Բուրբուլիսի առաջարկով՝ այս գիտակարգը ստացավ լեգիտիմություն և մտավ համալսարանական ծրագրեր [Scherrer, 2013, 154]: Ինչպես սրամտորեն նկատել է Ս. Սերեբրյանին՝ «դժբախտ մշակութաբանությունը» ավելի շուտ ինստիտուցիոնալացվեց, քան կոնցեպտուալացվեց [Серебряный 2009, 141-154]: Սակայն որպեսզի հայաստանյան համալսարաններում դասավանդվող որևէ գիտություն ինտեգրվի միջազգային գիտական համակարգեր, ուսանողները կարողանան շարունակել իրենց կրթությունը այլ երկրների համալսարաններում և գիտնականներն էլ մասնակցեն միջազգային ծրագրերին, անհրաժեշտ է մեր գիտակարգերը հարմարեցնել առավել տարածված գիտական համակարգերին, առնվազն համապատասխանեցնել գիտակարգերի անգլերեն անվանումներն ու ոլորտները՝ հումանիտար, սոցիալական, ճշգրիտ:

Այստեղ բխավում ենք մեկ այլ խնդրի: Մշակութաբանությունը ԵՊՀ-ն թարգմանել է «cultural studies», որը այլ երկրներում ունի որոշակի ծրագիր, որը հետխորհրդային մշակութաբանության հետ առնչություն չունի: Ավելին, դրանք հակառակ գաղափարախոսական բևեռներում են [Բայադյան 2015]: Մշակութային ուսումնասիրությունները (cultural studies) 1950-ականներին առաջարկել էր Բիրիիմգեմյան կենտրոնը, հետո շատ երկրներում այս անվամբ ուղղությունը վերածվեց մագիստրոսական ծրագրերի: Սա նշանակում է, որ ԵՊՀ-ի շրջանավարտներն իրենց դիպլոմում մշակութաբանություն որակավորմամբ և մեզ մոտ դասավանդվող առարկաների ցանկով չեն կարող շարունակել իրենց կրթությունն այլ երկրների «cultural studies» ծրագրի շրջանակում, քանի որ բխվելու են մասնագիտական նույնականացման հետ:

Ոչ պակաս անհերթելի լիճակում է «ազգագրությունը», որը պատճենելով ռուսերեն «этнография»-ն մինչ օրս անգլերեն թարգմանում ենք «ethnography»՝ առանց անդրադառնալու, որ աշխարհում այս բառի տակ նկատի ունեն դաշտային մեթոդը, որը, ինչպես քննարկեցինք վերը, կիրառվում է տարբեր սոցիալական գիտություններում: Իսկ այն բովանդակությամբ գիտակարգը, որը մեզանում հայտնի է որպես «ազգագրություն», ամերիկյան ազդեցությամբ ավելի հայտնի է որպես մշակութային կամ սոցիալ-

մշակութային մարդաբանություն: Բովանդակային առումով այն հիմնականում համապատասխանում է առարկաների այն ցանկին, որ անցնում են ԵՊՀ-ի հնագիտության և ազգագրության, մասամբ նաև Մշակութաբանության ամբիոնների ծրագրերում: Սակայն «ethnography» որակավորմամբ ուսանողները չեն կարողանալու գտնել իրենց կրթությունը շարունակելու այլ երկրի համալսարան, որը կառաջարկեր որպես հիմնական մասնագիտացում «ազգագրությունը»: Նրանք ստիպված կլինեն փնտրել մարդաբանություն որակավորում ունեցող համալսարաններ, որոնց պետք է ապացուցել, որ մեր ազգագրությունն իրենց մարդաբանությունն է:

Հայաստանում մասնագիտության անվանումը «ազգագրությունից» «մարդաբանություն» փոխելու հարցում բխվում ենք համակարգային խնդրի հետ, քանի որ գիտակարգի խորհրդային անվանումը ամրագրված է նաև այն գիտա-մշակութային օջախների անվանումներում, որտեղ ազգագրության բաժնի շրջանավարտները կարող են ակնկալել աշխատանք՝ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Մարդաբապատի ազգագրության թանգարան, պատմության թանգարանների ազգագրության բաժիններ, ևն: Թեպետ, բովանդակային առումով թանգարանների անվանման մեջ «ազգագրականը» այնքան էլ խնդրահարույց չէ, եթե ցուցադրվում է հիմնականում ավանդական մշակույթ:

Այս խառնաշփոթն անդրադառնում է նաև գիտական ինստիտուտների ներքին կառուցվածքի վրա, քանի որ բաժինները չեն կարող կողմնորոշվել իրենց գիտակարգային ինքնության հարցում: Օրինակ, քանակական մեթոդով աշխատողները, ովքեր առաջ իրենց նույնացնում էին ավելի շատ սոցիոլոգիայի հետ, հիմա փորձում են տեղավորվել «սոցիալական մարդաբանություն» անվան տակ՝ առանց անդրադառնալու, որ սա նույն մշակութային մարդաբանությունն է, և այն չի կարող հիմնվել մեծ մասամբ քանակական հետազոտությունների վրա:

Այսպիսով, մերօրյա Հայաստանում սոցիալական գիտությունները շարունակում են վերարտադրել խորհրդային գիտակարգերի սահմանները: Կրթական և գիտական համակարգերը կարիք ունեն համապատասխանեցվելու միջազգային գիտությանը ինչպես բովանդակությամբ, մեթոդաբանությամբ, այնպես էլ գիտակարգերի ինստիտուցիոնալ կառուցվածքով: Ուստի շատ ավելի կարևոր են համարում գիտա-կրթական բարելավումը սկսել ոչ թե ֆիզիկական նոր տարածք՝ օրինակ, ակադեմիական քաղաք, կառուցելուց, այլ ենթակառուցվածքների բովանդակային վերափոխումից, միջազգային համապատասխանելիություն ունեցող և շատ ավելի ճկուն համակարգեր մշակելուց:

Ազգագրության հասարակական և գիտական արդի պահանջները: 1991 թ. Հայաստանի անկախացումից հետո ազգագրության նկատմամբ վերաբերմունքն ու հասարակական, գիտական պահանջները որոշակիորեն փոխվեցին: Պատերազմական պայմաններում նորաստեղծ ազգային պետության կառուցումը նպաստեց ազգայնական

խոսույթի ծավալմանը՝ ձևակերպելով ազգային մշակույթի «առանձնահատկությունները» ամրագրելու պահանջ: Սա հայ ազգագրությունում, վերը քննարկված հանգամանքների բերումով, նշանակում էր հիմնականում XIX դարի վերջի – XX դարի սկզբի մշակույթի հանրահռչակում: Մյուս կողմից, նոր պետության ձևավորումը կարիք ուներ հասկանալու և գործնական նախագծերում հաշվի առնելու սոցիալ-տնտեսական, մշակութային կտրուկ փոփոխությունները: Հողի սեփականաշնորհումը, արցախյան պատերազմն ու դրա հետ կապված հայ փախստականության մեծ զանգվածների ինտեգրման խնդիրները, ավերիչ երկրաշարժի հետևանքով առաջացած սոցիալ-մշակութային նոր մարտահրավերները, քաղաքական համակարգի փոփոխությունը, բնակչության կտրուկ աղքատացումը ևն, սոցիալական գիտությունների առջև ձևակերպել էին բազմաթիվ հրատապ լուծում պահանջող խնդիրներ, որոնց առերեսվող գիտակարգերի ո՛չ դաշտերը, ո՛չ մեթոդաբանությունն ու գործիքակազմը մշակված չէին:

Ազգագրագետների առանձին խմբեր, ինչպես և սոցիալական այլ ոլորտների մասնագետներ, փորձում էին իրենց խորհրդային փորձառությամբ արձագանքել այս խնդիրներին: Այդ ձգտումն ավելի հետևողական բնույթ ստացավ տարբեր միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ կիրառական նախագծերի շրջանակում: Այլ երկրներից ժամանած մարդաբանների հետ համագործակցությունը բերեց իր պտուղները: Բացի կիրառական մարդաբանական նախագծերից, այս ուսումնասիրություններն առիթ ստեղծեցին յուրացնելու դաշտային աշխատանքի նախկինից տարբերվող մեթոդաբանություն ու մշակել թեմաների խնդրայնացման նոր դիտանկյուններ: Սրան զուգընթաց յուրացվում էր XX դարի երկրորդ կեսում մարդաբանությունում տեղի ունեցած գիտական հոլովույթի շրջադարձը՝ պոզիտիվիզմից դեպի մեկնաբանողական / կոնստրուկտիվիստական հարացույց:

Կիրառական նախագծերի վրա հիմնված հայ ազգագրագետների աշխատանքները կարելի է համարել հետխորհրդային տարածքում ռեֆլեքսիվ մարդաբանության առաջին օրինակներից [Պատմություններ-1, 2001], երբ հետազոտողները, գիտակցելով ուսումնասիրողի ազդեցությունը՝ թե՛ նյութի վրա, թե՛ դրա մեկնաբանության, կողք կողքի են դնում բանասացի խոսքն ու հետազոտողի մտորումները ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ:

Արագ փոփոխվող երևույթների տարբեր ընկալումներ հասկանալու և դրանք արձանագրելու անհրաժեշտությունը ստիպեցին վերանայել «փրկարար ազգագրությանը» բնորոշ մշակույթը որպես ստատիկ համակարգ դիտելու խորը արմատներ թողած մոտեցումը: Նոր հետազոտական դիտանկյան առաջացման հիմք դարձան այն կիրառական նախագծերը, որոնք ավանդույթների փոխարեն շեշտը դնում են պրակտիկաների վրա, մշակութային ժառանգությունը պահպանելու փոխարեն կամ կողքին՝ դրա հարմարվողական կարողությունների և զարգացման միտումների

ուսումնասիրության վրա: Ամենակարևոր շրջադարձը հետազոտական օբյեկտի տեղաշարժն էր՝ խմբից դեպի անհատ, ամենալայն ու բառացի իմաստով՝ ազգագրությունից դեպի մարդաբանություն [Abrahamian 2024]:

Ամփոփում: Այսպիսով, Հայաստանում սոցիալ-հումանիտար գիտակարգերը, որպես խորհրդային գիտակրթական համակարգի ժառանգորդ, բովանդակային և ինստիտուցիոնալ վերափոխման կարիք ունեն՝ հաշվի առնելով թե՛ ներքին պահանջները, թե՛ միջազգային առավել տարածված գիտակարգային սահմանումները:

Մասնավորապես, «ազգագրություն» անուն կրող գիտակարգը, թեև իր այսօրվա բովանդակությամբ բավականին ինտեգրված է միջազգային մարդաբանական գիտական աշխարհին, սակայն իր անվանմամբ շփոթություն է առաջացնում, քանի որ «ազգագրությունը» սոցիալական գիտություններում ավելի հայտնի է որպես հետազոտական դաշտային մեթոդ: Նման անվանումը շփոթություն է առաջացնում նաև ներքին գիտակրթական շուկայում, քանի որ նույնականացվում է ավանդական մշակույթը պահելու առաքելության հետ: Մինչդեռ միջազգային ծրագրերում փորձ ունեցող մասնագետները ստիպված են ներկայանալ որպես սոցիալ-մշակութային մարդաբան՝ հաշվի առնելով իրենց մասնագիտական բովանդակությունը, բայց որը չի համապատասխանում երկրում ստացած փաստաթղթային ձևակերպումներին:

Սույն հոդվածի նպատակն էր բարձրաձայնել սոցիալական գիտության հայաստանյան համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը: Բացել միջգիտակարգային քննարկում հարևան գիտությունների ներկայացուցիչների, մասամբ համընկնող ծրագրեր իրականացնողների, ոլորտի տարբեր մակարդակների վարչարարության պատասխանատուների միջև՝ այս խնդիրների համատեղ և առավել շահեկան լուծումներ փնտրելու համար:

Գրականության ցանկ

Bayadyan 2015 – Bayadyan H., Mshakut’abanut’yun yev/kam mshakut’ayin usumnasirut’yunner, Hetk’, 2015, marti 16 <https://hetq.am/hy/article/59063> (in Armenian)

Lalayeyan 1896a – Lalayean Yer., Hratarakch’its’, Azgagrakan handes, 1896, Girk’ A, ej 5-6 (in Armenian)

Lalayeyan 1896b – Lalayean Yer., Hamarrot Tesut’yun hay azgagrut’yan, Azgagrakan handes, 1896, Girk’ A, ej 7-26 (in Armenian)

Lippert 1908 – Lippert Y. Koylturi patmut’iwn, Masn yerkrord, Eminean azgagrakan zhoghovatsu, h. E, 1908, ej 1-221 (in Armenian)

Kanonadrut’iwn 1906 – Kanonadrut’iwn hayots’ azgagrakan ynkerut’ean, Azgagrakan Handes, Girk’ , T’iflis, 1906, ej 186-195 (in Armenian)

Melik'-P'ashayan, Nazinyan 1988 - Melik'-P'ashayan K.V., Nazinyan A.M., Yervand Lalayani kyank'n u gitakan gortsuneut'yuny, Yer. Lalayan, Yerker, h. I, Yerevan. Haykakan SSH, GAA hratarakch'ut'yun, 1988, ej 7-31 (**in Armenian**)

Shagoyan, 2024 – Shagoyan G., Inch'pes yen kapvum yarkhushtan, «Sasna tsrrer»-n u hazarasheny. azgayin patumi dzevavorumy khorhrdayin ardiakanats'man nakhagtsum, Ashnak gyughi orinakov», khmb. T. Dalalyan, «Pari tsisakan yev banahyusakan yent'atek'sty» gitazhoghov, nvirvats Gagik Ginosyani hishatakin, 27-29 septemberi, Yerevan, HAI hrat., 2024, ej 70-74 (**in Armenian**)

Shterrnberg 1908 - Shterrnberg L., Azgagrut'iwn, Eminean azgagrakan hades, 1908, h. E, ej 1-36 (**in Armenian**)

Patmut'yunner-1 2001 - L. Abrahamyan, A. Gulyan, H. Kharratyan, H. Marut'yan, H. Petrosyan, H. Pikich'yan. Patmut'yunner aghk'atut'yan masin, Yer., «Lusakn» hrat., 2001, 432 ej (**in Armenian**)

Petri 1896 – Petri E. Mardabanut'ean patmakan zargats'umy, Azgagrakan handes, Girk' A, 1896, ej 3-52 (**in Armenian**)

Abrahamian 2014 – Abrahamian L., Od współczesności XIX wieku do współczesności wieku XXI, pod redakcją Lewona Abrahamiana i Konrada Siekierskiego, Armenia: kultura współczesna w ujęciu antropologicznym), Warszawa: Wydawnictwo DiG, 2014, pp. 19-31. (**in Russian**)

Arutyunyan 2021 – Arutyunyan V., Istoriya politzaklyuchennogo, Yer.: «Van Ar'yan», 2018, 275 s. Bromley 1973 – Bromley YU.V., Etnos i etnografiya. Moskva: Nauka, 1973, 283 s. (**in Russian**)

Vallerstayn 2006 – Vallerstayn I. Mirosistemnyy analiz: Vvedeniye, M.: Izdatel'skiy dom «Territoriya budushchego», 2006, s. 230-246 (**in Russian**)

Kollinz 2009 – Kollinz R., Chetyre sotsiologicheskikh traditsii, M.: Izdatel'skiy dom «Territoriya budushchego», 2009, 320 s. (**in Russian**)

Martin 2001 – Martin T., Imperiya polozhitel'noy deyatelnosti: Sovetskiy Soyuz kak vysshaya forma imperializma, red.: R. Syuni, T. Martin, Gosudarstvo natsiy: imperiya i natsional'noye stroitel'stvo v epokhu Lenina i Stalina, M.: ROSSPEN, s. 88-116 (**in Russian**)

Serebryanny 2009 – Serebryanny S., Yest' li takaya nauka «kul'turologiya»? Filologiya, Iskuststvedeniye, Kul'turologiya: novyye vodorazdely i perspektivy vzaimodeystviya. Materialy Mezhdunarodnoy nauchnoy konferentsii, Sankt-Peterburg: Nestor-Istoriya, 2009, s. 141-154 (**in Russian**)

Tishkov 2003 - Tishkov V. A., Rekviyem po etnosu: issledovaniya po sotsial'noy i kul'turnoy antropologii. Moskva: Nauka, 2003, 532 s. (**in Russian**)

Shagoyan 2022 – Shagoyan G., «Natsional'noye po sodержaniyu i sotsialisticheskoye po forme»: palimpsest memorialov sovetskoy Armenii, Armyanskiy gumanitarnyy vestnik, 2022, N9, s. 122-144 (**in Russian**)

Yurchak 2014 – Yurchak A., Eto bylo navsegda, poka ne konchilos'. Posledneye sovetskoye pokoleniye, M.: NLO, 2014, 664 s. (**in Russian**)

Abrahamian 2024 – Abrahamian L., From Ethnography to Anthropology: A Survey of a Social Discipline in Armenia, public lecture at USC, 2024

Bart, Gingrich, Parkin, Silverman 2005 – Bart F., Gingrich A., Parkin R., Silverman S., One Discipline, Four Ways: British, German, French, and American Anthropology, Chicago and London: University of Chicago Press, 2005, 406 p.

Buchowski 2006 - Buchowski M., Social Thought & Commentary: The Specter of Orientalism in Europe: From Exotic Other to Stigmatized Brother, *Anthropological Quarterly*, Vol. 79, No. 3 (Summer, 2006), pp. 463-482

Clay 1995 - Clay C. B., Russian Ethnographers in the Service of Empire, 1856-1862, *Slavic Review*, Vol. 54, No. 1 (Spring, 1995), pp. 45-61

Clifford 1988 - Clifford J., *The Predicament of Culture: Twentieth-Century Ethnography, Literature, and Art*, Cambridge, MA: Harvard University Press, 1988, 408 p.

Clifford, Marcus 1985 – Writing Culture. The Poetics and Politics of Ethnography, eds.: Clifford J., Marcus G.E., Berkeley: University of California Press, 1985

Dabaghyan 2011 – Dabaghyan A., Salvage versus Knowledge: Armenian Ethnography Across Soviet Times, eds.: Mühlfried F., Sokolovskiy S., *Soviet Era Anthropology in the Caucasus and Central Asia*, Berlin et al., LIT, pp. 151-173, Appendix 1

Hagan 2009 – Hagan M.D., The Transnational Ethnic Activism of Vojvodina Hungarians, *Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity*, 2009, September, Vol. 37, No 5, 613-640

Hirsch 2005 – Hirsch F., *Empire of Nations: Ethnographic Knowledge and the Making of the Soviet Union*. Ithaca, NY: Cornell University Press, 2005, 367 p.

Hrokh 1993 – Hrokh M., From National Movement to the Fully-formed Nation. The Nation-building Process in Europe, *New Left Review*, 1993, No. 198, April, pp. 3-19

Kuper 2015 – Kuper A., *Anthropology and Anthropologists. The British School in the Twentieth Century*, London, NY: Routledge, 2015, 152 p.

Levi-Strauss 1975 – Levi-Strauss C., *Anthropology: Preliminary Definition: Anthropology, Ethnology, Ethnography*, *Diogenes*, 1975, vol. 25, issue 90, pp. 1-25

Midena, Yeo 2022 – Midena D., Yeo R., Towards a history of the questionnaire, *Intellectual History Review*, 2022, vol. 32, No 3, pp. 503-529

Said 1977 - Said Ed., *Orientalism*. London: Penguin, 1977, 374 p.

Scherrer 2013 – Scherrer J., The ‘cultural/civilizational turn’ in post-Soviet identity building, eds.: P.-A. Bodin, S. Hedlund, E. Hamli, *Power and Legitimacy Challenges from Russia*, L., NY.: Routledge, 2013, pp. 152-168

White 1958 – White L., *Culturology*, *Science*, 1958, Vol. 128, Issue 3324, p. 1246